ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՄՃՀ-ՀՄԱՊՁԲ-26/01

ք. Ճամբարակ «12» 02 2026թ.

«Ճամբարակի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Վազգեն Ադամյանի, որը գործում է Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ՀԱՅԿ 2006» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Հայկ Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **9 384 300 /ինը միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ___365_____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը

և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով

նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ճամբարակի համայնքապետարան	« ՀԱՅԿ 2006 » ՍՊԸ
1301 ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 125	ք.Երևան,Դավթաշեն 1-ին թղմ.,
ՀՀ Ֆինանսների նախարարության	36/9 տարածք
գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900182081472	«Դավիթաշեն» մասնաճյուղ
ՀՎՀՀ 08625868	Հ/Հ 220293281352000
	ՀՎՀՀ 08307968
Վ.ԱԴԱՄՅԱՆ----------	ՀԽԱՉԱՏՐՅԱՆ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » 02 2026թ. կնքված
ԳՄՃՀ-ՀՄԱՊՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հրավե-րով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհա-նուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը***
2	**0 3142500**	**Ձու**	Մասիս ՍՊԸ	02 կարգ; Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, պահպանման ժամկետը՝ 25 օր, ՀՍՏ 182-2012 կամ համարժեք: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական երկու անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով:	հատ	78	**2 056 080**	26360	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
4	**0 3221100**	**Բազուկ**	Գյուղմթերք	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 7-10 սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Հունիս-օգոստոս ամիսներին պետք է մատակարարվեն վաղահաս տեսակները՝ տրամագիծը՝ առնվազն 5-7սմ: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:	կգ	345	**324 645**	941	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
5	**0 3221110**	**Գազար**	Գյուղմթերք	Սովորական և ընտիր տեսակի, պտուղները թարմ, ամբողջական, առողջ, չթորշնած, առանց գյուղատնտեսական վնասատուներով վնասվածքների, առանց ավելորդ ներքին խոնավության, տրամագիծը՝ 1,5-3,5 սմ, երկարությունը՝ 10-15 սմ:	կգ	345	**605 475**	1755	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
6	**0 3221111**	**Սոխ,գլուխ**	Գյուղմթերք	Թարմ, քաղցր, ընտիր տեսակի, մեջտեղից բաժանված երկու մասի՝ տրամագիծը 6-7 սմ-ից ոչ պակաս:	կգ	290	**105 560**	364	**ք.Ճամբա-րակ համապատասխան**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև

									ՀՈԱԿ	վրա	2026թ.դեկտ եմբերի 30-ը:
38	**15311100**	**Կարտոֆիլ/ ուշահաս/**	Գյուղմթերք	I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների,չափսերը՝ ընդհանուր քաշի 60%՝ կլոր-ձվաձև 10-14 սմ, 40 %՝ կլոր-ձվաձև 8-10 սմ, : Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս:	կգ	245	**1 288 700**	5260	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
39	**15311100**	**Կարտոֆիլ/ վաղահաս/**	Գյուղմթերք	I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների,չափսերը՝ ընդհանուր քաշի 60%՝ կլոր-ձվաձև 10-14 սմ, 40 %՝ կլոր-ձվաձև 8-10 սմ, : Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս:	կգ	340	**306 000**	900	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
41	**15331151**	**Լոբի հատիկ**	Մառանիկ ՍՊԸ	Լոբի հատիկավոր /փաթեթավորումը՝ առավելագույնը 5կգ/; Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, մաքուր, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %: Փաթեթավորումը՝ թղթե տոպրակով կամ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով:	կգ	1450	**227 650**	157	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
42	**15331152**	**Սիսեռ**	Մառանիկ ՍՊԸ	Կլոր սիսեռ, համասեռ, մաքուր, չոր, խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի, առանց վնասատուների և հիվանդությունների: Փաթեթավորումը՝ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով:	կգ	1050	**181 650**	173	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
43	**15331153**	**Ոսպ**	Մառանիկ ՍՊԸ	Փաթեթավորումն՝ առավելագույնը 5կգ: Երեք տեսակի, համասեռ, խոշոր չափի, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչ ավելի: Փաթեթավորումը սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով:	կգ	680	**287 640**	423	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
51	**15333100**	**Տոմատի մածուկ**	Վիլֆուդ ՍՊԸ	Բարձր տեսակների՝ բնական հումքից ապակե տարաներով, զտաքաշը՝ 1060գր, ածխաջրեր՝ 15.8, էներգետիկ արժեքը՝79 կկալ:	կգ	1230	**246 000**	200	**ք.Ճամբա -րակ համապա տասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահան ջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագի րը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտ եմբերի 30-ը:
53	**15421100**	**Արևածաղ-**	Կուբանսկոյե	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված); Պատրաստված	լիտր	940	**960 680**	1022	**ք.Ճամբա**	ՀՈԱԿ-ի	կողմերի

		կի ձեթ /ռաֆի-նացված/	Յուտ ՍՊԸ	արևաածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Փաթեթավորումը՝ քաշը՝ 0.9-1 լիտր տարողությամբ շշերում /առանց տարայի քաշը հաշվելու/:					**-րակ համապատասխան ՀՈԱԿ**	պահանջագրի հիման վրա	միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
56	**15531100**	**Կարագ**	Նոր Զելանդական Ֆոնտերա ՍՊԸ	Կարագ սերուցքային /փաթեթավորումը՝ 5կգ և 10 կգ, ըստ պատվիրատուի/; յուղայնությունը՝ 82,9%, բարձր որակի, թարմ, վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7գ, ածխաջուր 0,7գ, 740 կկալ, տիտրվող թթվայնությունը՝ 23-ից ոչ ավելի կամ կարագի պլազմայի pH-ը 6,25-ից ոչ պակաս՝ քաղցր սերուցքային տեսակի կարագի համար, գործարանային փաթեթներով:	կգ	5950	**1 487 500**	250	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
63	**15613350**	**Վարսակա-ձավար**	Մառանիկ ՍՊԸ	Եփման ենթակա տեսակ, փաթեթավորումը՝ գործարանային, /350-500 գր, ստվարաթղթե տուփով, գործարանային փաթեթավորմամբ/: Վարսակի փաթիլներում խոնավությունը պետք է լինի 12%–ից ոչ ավել, մոխրայնությունը՝ 2,1%–ից ոչ ավել, թթվայնությունը՝ 5,0%-ից ոչ ավել, աղբային խառնուրդները՝ 0,30%-ից ոչ ավել:	կգ	1380	**412 620**	299	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
64	**15614200**	**Բրինձ,երկար տեսակի**	Մառանիկ ՍՊԸ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%:	կգ	580	**504 600**	870	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
65	**15614200**	**Բրինձ,կլոր տեսակի**	Մառանիկ ՍՊԸ	Սպիտակ, խոշոր, կլոր տեսակի, չկոտրած, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%:	կգ	580	**150 800**	260	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
69	**15619000**	**Հաճարաձա-վար**	Մառանիկ ՍՊԸ	Փաթեթավորումը՝ առավելագույնը 2կգ: Ստացված հաճարի հատիկներից, մաքուր: Փաթեթավորումը՝ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային թաղանթով՝ համապատասխան մակնշումով, հատիկներով, խոնավությունը 15 %-ից ոչ ավելի:	կգ	540	**164 700**	305	**ք.Ճամբա-րակ համապատասխան ՀՈԱԿ**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման վրա	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026թ.դեկտեմբերի 30-ը:
70	**15619100**	**Սպիտակաձա-վար**	Մառանիկ ՍՊԸ	Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, կամ փափուկ ցորենից, որի պինդ խառնուրդը մինչև 20% է և նախատեսված է սննդային նպատակներով օգտագործման համար: Առանց թթվահամության, դառնահամության, բորբոսահոտի, նեխահոտի և կողմնակի համի և հոտի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս	կգ	740	**74 000**	100	**ք.Ճամբա-րակ համապատասխան**	ՀՈԱԿ-ի պահանջագրի հիման	կողմերի միջև կնքվող պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև

				քան 60 %:					ՀՈԱԿ	վրա	2026թ.դեկտեմբերի 30-ը:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:*

*** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայավել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը,ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը » սյունակը:Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ
Ճամբարակի համայնքապետարան
1301 ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 125
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900182081472
ՀՎՀՀ 08625868

Վ.ԱԴԱՄՅԱՆ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
« ՀԱՅԿ 2006 » ՍՊԸ
ք.Երևան,Դավթաշեն 1-ին թղմ.,
36/9 տարածք
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
«Դավիթաշեն» մասնաճյուղ
Հ/Հ 220293281352000
ՀՎՀՀ 08307968

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » 02 2026 թ. կնքված
ԳՄՃՀ-ՀՄԱՊՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	**0 3142500**	**Ձու**		**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**	**2 056 080**
4	**0 3221100**	**Բազուկ**		**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**	**324 645**
5	**0 3221110**	**Գազար**		**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**	**605 475**

6	0 3221111	Սոխ,գլուխ		105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560	105 560
38	15311100	Կարտոֆիլ/ուշահաս/		1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700	1 288 700
39	15311100	Կարտոֆիլ/վաղահաս/		306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000	306 000
41	15331151	Լոբի հատիկ		227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650	227 650
42	15331152	Սիսեռ		181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650	181 650
43	15331153	Ոսպ		287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640	287 640

51	15333100	Տոմատի մածուկ		246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000	246 000
53	15421100	Արևածաղ-կի ձեթ /ռաֆի-նացված/		960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680	960 680
56	15531100	Կարագ		1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500	1 487 500
63	15613350	Վարսակա-ձավար		412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620	412 620
64	15614200	Բրինձ,երկար տեսակի		504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600	504 600
65	15614200	Բրինձ,կլոր տեսակի		150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800	150 800

69	**15619000**	**Հաճարաձավար**		**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**	**164 700**
70	**15619100**	**Սպիտակաձա-վար**		**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**	**74 000**

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
Ճամբարակի համայնքապետարան
1301 ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 125
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900182081472
ՀՎՀՀ 08625868

Վ.ԱԴԱՄՅԱՆ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
« ՀԱՅԿ 2006 » ՍՊԸ
ք.Երևան,Դավթաշեն 1-ին թղմ.,
36/9 տարածք
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
«Դավիթաշեն» մասնաճյուղ
Հ/Հ 220293281352000
ՀՎՀՀ 08307968

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.